ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 28

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

26.12.2017թ. ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 29-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ի զարգացման 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի (ԵՊՀ ԻՄ-ի 2016-2017թթ. ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվություն) մասին:

   Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան

2. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2017թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հունվար-դեկտեմբեր կատարողականի մասին:

   Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան

3. ԵՊՀ ԻՄ-ի 2018թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) մասին:

   Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան

4. ԵՊՀ ԻՄ-ում <<Կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2016-2017 ուստարվա համալիր միջոցառումների>> կատարման արդյունքների մասին:

   Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան

5. Ընթացիկ հարցեր

5.1 ԵՊՀ ԻՄ-ի ներքին կարգապահական կանոնների (նոր խմբագրությամբ) հաստատումը:

5.2 ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների կազմակերպման կարգի հաստատումը:

5.3 ԵՊՀ ԻՄ-ի գրադարանի կանոնադրության (նոր խմբագրությամբ) հաստատումը:

5.4 ԵՊՀ ԻՄ-ի գրադարանային խորհրդի կանոնակարգի (նոր խմբագրությամբ) հաստատումը:

5.5 ԵՊՀ ԻՄ-ի գրադարանի զարգացման հայեցակարգի հաստատումը:

5.6 ԵՊՀ ԻՄ-ի գրադարանային խորհրդի կազմի հաստատումը:

5.7 ԵՊՀ ԻՄ-ի մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի կանոնադրության հաստատումը:

5.8 ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական գիտական ընկերության նոր նախագահ ընտրվելու մասին:

5.9 ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան, հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Արտաշեսի Ներսիսյանի «Անկախ Ղարաբաղը 1917-1921 թվականներին» եռահատոր աշխատության առաջին պրակը հրատարակման երաշխավորելու մասին:

5.10 «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրեն, Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Սամվել Արշավիրի Առաքելյանի, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի

ապահովման բաժնի մասնագետ, Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, իրավունքի և սոցիոլոգիայի ինստիտուտի ավագ գիտաշխատող Էդիկ Անդրանիկի Կյուրեղյանի, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի վարիչ, Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ Մարիետա Ալբերտի Ճաղարյանի համահեղինակությամբ ‹‹ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը հասարակական կարծիքի համապատկերում››, (գիտաուսումնական մտորումներ և փաստեր) աշխատությունը հրատարակման երաշխավորելու մասին:

Որոշում N 28/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 15-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 15-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ 2016-2017 ուստարվա ընթացքում Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ տնօրենի հաշվետվությանը:
2. Հավանություն տալ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրով 2016-2017 ուստարում նախատեսված գործողությունների վերաբերյալ տնօրենի հաշվետվությանը:
3. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2016-2017 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

Որոշում N 28/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2017 թվականի (հունվար-նոյեմբեր) եկամուտների և ծախսերի վերաբերյալ գործունեության տնօրենի հաշվետվությունը:
2. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2016 թվականի եկամուտների և ծախսերի հաշվետվության գնահատումը կատարել հաշվեքննության արդյունքների հիման վրա և ներկայացնել հաստատման:

Որոշում N 28/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 11-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 11-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2018 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը համաձայն հավելված 3-ի:
2. Հանձնարարել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տնօրենին 2018 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը ներկայացնել Երևանի պետական համալսարան հաստատման:

Որոշում 28/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ներքին կարգապահական կանոնները (նոր խմբագրությամբ)՝ համաձայն հավելված 5-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 18.04.2015թ.-ի թիվ 9 նիստում հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ներքին կարգապահական կանոնները:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշում 28/6

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների կազմակերպման կարգը՝ համաձայն հավելված 6-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2010թ. սեպտեմբերի նիստում հաստատված Երևանի պետական

համալսարանի Իջևանի մասնաճյուղում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման կանոնակարգը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշում 28/7

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գրադարանի կանոնադրությունը (նոր խմբագրությամբ)՝ համաձայն հավելված 7-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2005թ. մարտի 18-ի թիվ 1 նիստում հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գրադարանի կանոնադրությունը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշում 28/8

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գրադարանային խորհրդի կանոնակարգը (նոր խմբագրությամբ)՝ համաձայն հավելված 8-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2014թ. հունվարի 27-ի թիվ 1 նիստում հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գրադարանային խորհրդի կանոնակարգը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշում 28/9

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գրադարանի զարգացման հայեցակարգը՝ համաձայն հավելված 9-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշում 28/10

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գրադարանային խորհրդի կազմը՝ համաձայն հավելված 10-ի։
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

Որոշում 28/11

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի կանոնադրությունը համաձայն հավելված 11-ի։
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

Որոշում 28/12

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական գիտական ընկերության 2017-2018թթ. ուստարվա 5-րդ նիստի որոշումը՝ ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական գիտական ընկերության նախագահի պաշոնում հաստատել Հրանտ Ղարագյոզյանին։

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշում 28/13

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 13-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել հրատարակման ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան, հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Արտաշեսի Ներսիսյանի «Անկախ Ղարաբաղը 1917-1921 թվականներին» աշխատությունը:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշում 28/14

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 13-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել հրատարակման «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրեն, Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Սամվել Արշավիրի Առաքելյանի, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի

Իջևանի մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի մասնագետ, Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, իրավունքի և սոցիոլոգիայի ինստիտուտի ավագ գիտաշխատող Էդիկ Անդրանիկի Կյուրեղյանի, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի վարիչ, Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ Մարիետա Ալբերտի Ճաղարյանի համահեղինակությամբ ‹‹ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը հասարակական կարծիքի համապատկերում››, (գիտաուսումնական մտորումներ և փաստեր) աշխատությունը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ_____Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար_____Մ.Ս. ԱԹՈՅԱՆ